նեհեղ և զՆղիա և իբրև զառաքեալքն Պետրոս և Պաւղոս։ Հաւատով և յուսով իբրև զՍէթ և զԵնովս և զԵնովք և զՆոյ։ Ողորմած և գթած, աղքատասէր և հիւրասէր որպէս զԱբրահամ և զՂովտ և զՅոհաննէս ողորմածն և զԳրիգոր պապն Հռոմայ։ Համբերող և ժուժկալ իբրև զՅոբ և զԽասհակ, զՅակոբ և զՅովսէփ. իմաստուն և հանճարեղ և գիտնական իբրև զԴաւիթ և զՍողոմոն և զՍիրաք և քան զնաւս ի հեռաւորականացն։ Արի և քաջ և յաղթող և առաքինի, որպէս զՊաւղ և զՄակար, որպէս զՆեղոս և զՈնոփրիոս։ Անդադար և հանապազ միշտ էր ի յաղօթելն. ի սաղմոսելն, ի ծունր դնելն։ Եւ զաղբիւրս արտասուացն իջուցանէր յաչացն զտիւ և զգիշեր վասն վշտաց քրիստոնէից ըստ Դաւթի, որ ասէ. Վտակք ջուրց իջին յաչաց իմոց, զի ոչ պահեցին զպատուիրանս քո*։ Եւ դարձեալ թէ հայէի յանազորոյնս և մաշէի**։ Որպէս ասէ Սողոմոն. վասն զի ի բազում իմաստութենէ յաւելութիւն գիտութեանն, և որ յաւելու ի գիտութիւն, յաւելու ի ցաւս***։ Եւ սուրբ հայրս մեր հոգևոր միշտ ցաւէր վասն հայոց եկեղեցեաց, կարգաւորաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, կենդանեաց և մեռելոց։ Եւ զայս ամենայն դառնութիւնս ի միտ ածէր և ոչ դադարէր իբրև զԵրեմիա մարգարէն և զԵզրաս դպիրն և աւրէնուսոյց ժողովրդեանն որ ասէ. Ո՞ տայր զծով ի յարտասուս մեր, զի լացից զբեկումն ազգին իմոյ և զաւերումն Երուսաղէմի†։ Նոյնպէս և սա առնէր զբանս նոցա

---

* Սաղմ. ՃԺԸ. 136 ** Սաղմ. ՃԺԸ. 158. *** Ժող. Ա. 18.

† Երեմն Թ. 1.

1) ԲԳ. զեղիայ ԲԳ. զառաքեալն Պետրոս Բ. զՊօղոս Դ. չ. Պաւղոս

2) Ա. եւ զզենովք

3) Ե. աղքասէր.. իբրեւ փ. որպէս

4) ԱԴ. զյօհաննէս Բ. զոհաննէս Ե. զրիգոր

5) Ա. հռոմա Դ. հռօմայ ԲԵ. զոբ. զակոբ Դ. զյօսէփ

6) Ա. «եւ» զիտ. չիք

7) Ա. սողմոն Դ. սողօմոն Ե. եւ սիրաք Բ. ի հռետորա՞կնանց

8) ԱԴ. յաղթօղ ԲԴԵ. ի առաքինութիւնն Դ. էր ի յառաքինութիւնն

10) Ա. չ. էր

11) ԴԵ. եւ զաղբիւր արտասուսն Դ. եւ ո՞պ զաղբիւր զարտասուսն ԲԵ. ի աչացն Դ. ի յաչացն 12) Բ. ասէր

13) Ե. աչաց 14) Ա. քոյ Բ. յանազորոյսն Ե. յանազորոյն

17) Ա. յեկեղեց՞ս հ՞յց. կարգւ՞ր.

20) ԱԲ. չ. ոչ Ա. զԵրեմիայ եւ Եզիսե, ընդգծուածը փոխ. մարգարէն

21) Ա. յօրէնս ուսոյց ԲԴԵ. օրէնք ուսոյց, Դ. օրէնս ուսոյց

22) Ա. յազգին.. յե՞ղմի